# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑ «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ

**03.08.2020 15:47**

*Հարգելի՛ փաստաբաններ,*

05.08.2020թ. ժամը 16:00-18:00-ը ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպելու է հեռավար դասընթաց **«Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների պաշտպանությունը»** թեմայով:

- Դասընթացը կվարի փաստաբան Վանիկ Մարգարյանը:

- Դասընթացին կարող եք միանալ Ձեր գտնվելու վայրից:

- Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 05.08.2020թ. ժամը 12:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով ani.gharibyan@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը:

- Դասընթացին նախապես գրանցված փաստաբանների էլեկտրոնային փոստի հասցեին կուղարկվի հրավեր, որն ակտիվացնելով կմիանաք դասընթացի հարթակին:

- Դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

***Տեղեկացնում ենք նաև, որ դասընթացի հրավերը կստանաք «Zoom» հարթակից, որին միաժամանակ կարող է միանալ մինչև 100 մասնակից, ուստի գրանցման առաջնահերթությունը տրվելու է առավել վաղ գրանցված 100 փաստաբանի:***

***Հետևապես, խնդրում ենք գրանցվել միայն այն դեպքում, եթե համոզված եք, որ դասընթացին մասնակցելու եք:***

***Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ նախորդիվ գրանցված մի շարք փաստաբաններ մուտք չեն գործել համակարգ, որի հետևանքով ավելի ուշ գրանցման հայտ ներկայացրած փաստաբանները հրավեր չեն ստացել և չեն կարողացել մուտք գործել համակարգ, ուստի բոլոր հայտ ներկայացրած փաստաբաններին համակարգ մուտք գործելու հրավերը կուղարկվի և նախատեսված ժամին համակարգ մուտք գործած 100 փաստաբանները հնարավորություն կունենան մասնակցելու դասընթացին:***

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })